ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏ-ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Ծնվել է 1927 թ. Աթենքում՝ բանասեր-հրապարակախոս Միքայել Բարթիկյանի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է հայկական և հունական վարժարաններում: 1945 թ. ավարտել է հունական գիմնազիան: 1946 թ. ներգաղթել է Հայաստան: 1953 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Ուսումնառությունը շարունակել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ընթացել է Լենինգրադում՝ ակադ. Հ. Օրբելու ղեկավարությամբ: 1958 թ. Լենինգրադի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն («Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրները», լույս է տեսել Երևանում, 1961 թ., ռուսերեն լեզվով), 1971 թ. Երևանում՝ դոկտորական ատենախոսություն («Բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսը և նրա նշանակությունը հայագիտության համար»):

1957 թ. ցայսօր աշխատում է Պատմության ինստիտուտում: 1960-ից Միջին դարերի պատմության բաժնի վարիչ է: Բացի գիտական հոդվածներից, լույս է ընծայել 15 գիրք: ՀՀ ԳԱԱ հրատարակչությամբ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ» մատենաշարով հրատարակել է բյուզանդական մի շարք հեղինակների աշխատությունների իր հայերեն թարգմանությունները՝ ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով (Պրոկոպիոս Կեսարացի, 1967, Կոստանդին Ծիրանածին, 1970, Հովհաննես Սկիլիցես, 1979, Թեոփանես Խոստովանող, 1983, Թեոփանեսի Շարունակող, 1990): Գիտությունների ակադեմիայի «Գրական հուշարձաններ» մատենաշարով հրատարակել է բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսի իր իրականացրած հայերեն չափածո թարգմանությունը, 1978, Պետական համալսարանի հրատարակչությամբ՝ Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» աշխարհաբար թարգմանությունը, 1973, Պրոկոպիոս Կեսարացու «Գաղտնի պատմությունը», 1987: Աղբյուրագիտական նույնչափ արժեք ունի «Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Հանրապետության շրջանում (1918-1920)» (Երևան, 1998) գործը, Հունաստանում հունարեն լեզվով հրատարակել է «Բյուզանդիան հայկական աղբյուրներում» (Սալոնիկ, 1981), «Բյուզանդիա և Հայաստան» (Աթենք, 1991), «Գավրասների բյուզանդական ազնվականական ընտանիքը» (Աթենք, 1993) գրքերը:

1980 թ. ընտրվել է Աթենքի ակադեմիայի, 1987 թ.՝ Հռոմի «Տիբերինա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիայի, իսկ 1990 թ.՝ Հայաս-

տանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: Հայաստանի գրողների միության անդամ է (1995):

Իր մասնագիտական խոր գիտելիքները Հ. Բարթիկյանն ի նպաստ է դրել նաև հունական գիտական հասարակայնությանն ու ուսանող երիտասարդությանը: 1983 թ. «Հայ-բյուզանդական հարաբերություններ» թեմայով դասախոսություններ է կարդացել Կրետեի համալսարանի փիլիսոփայության (հասարակագիտական) ֆակուլտետում:

1981 թ. ընտրվել է Հունաստանի Բյուզանդական հետազոտությունների ընկերության, ապա՝ Հունական քաղաքակրթության հաստատության պատվավոր անդամ, արժանացել է ՀՀ ԳԱԱ «Մեսրոպ Մաշտոց» մրցանակի, Սալոնիկի Արիստոտելյան համալսարանի Արիստոտելի անվան մեդալի:

1986 թ. պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով: 2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի: 2007 թ. ստացել է «Գրական վաստակի համար» ՀՀ Գրողների միության մեդալ:

Հ. Բարթիկյանը շարունակում է իր՝ տքնաջան գիտնականի գործը, լի՝ գիտական նոր մտահղացումներով և դրանք իրականացնելու ավյունով:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը մեծավաստակ գիտնականին ցանկանում է քաջ առողջություն և հաջողություններ՝ իր էջերում նրան հաճախակի հյուրընկալելու ակնկալիքով:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի
խմբագրական խորհուրդ, խմբագրակազմ